

## Մարտական գործողությունների մասնակիցների հետտրավմատիկ անձնային աճի և բազային արժեքային կողմնորոշումների փոխադարձ կապը

Ստեփանյան Լիլիթ

DOI: <https://doi.org/10.58726/27382915-2025.2hs-262>

**Հանգուցային բառեր.** նոր հնարավորություններ, անհատականության ուժ, կյանքի արժեքի վերագնահատում, ավանդականություն, ինքնուրույնություն, ձեռքբերումներ, կամեցողություն, անվտանգություն

### Նախաբան

Հնդվածի արդիականությունը. Հայաստանը վերջին տարիներին բխյվել է պատերազմական իրավիճակների (օրինակ՝ 2020 թ. Արցախյան պատերազմ և դրանից հետո պարբերաբար մարտական գործողությունները), ինչը մեծացրել է հետտրավմատիկ խանգարումների և դրանց հաղթահարման ուսումնասիրության կարևորությունը: Ժամանակակից հոգեբանության մեջ աճում է հետաքրքրությունը տրավմայի դրական հետևանքների (ՀՏՍ) նկատմամբ, և այս աշխատանքը լրացնում է գիտելիքների բացը՝ կապված մեր տարածաշրջանային համատեքստի հետ: Բացի այդ, այն արձագանքում է հասարակության կարիքներին՝ օգնելու վետերաններին և նրանց ընտանիքներին վերաինտեգրվել կյանքին:

Մարդու հոգեկան և սոցիալական զարգացումը կախված է բազմազան հանգամանքներից, որոնցից մեկը մարտական գործողություններին մասնակցությունն է: Այդպիսի փորձառությունը կարող է ունենալ խորը և երկարատև ազդեցություն անձի անձնային աճի, կյանքի արժեքային կողմնորոշումների և ներքին ուժի զարգացման վրա: Մարտական գործողություններին մասնակցած անձանց առջև ծառանում են ոչ միայն ֆիզիկական, այլև հոգևոր և անձնային մարտահրավերներ, որոնք ազդեցություն են թողնում նրանց արժեհամակարգի և ընդհանրապես կյանքի վրա: Նման տրավմատիկ փորձառությունները կարող են լինել ոչ միայն վնասակար, այլև միտումներ ունենալ հոգևոր և անձնային աճի համար: Հետտրավմատիկ անձնային աճը ենթադրում է, որ մեծ դժվարություններով տրավմատիկ իրադարձությունների միջով անցած մարդիկ կարող են վերագնահատել կյանքը և վերափոխել իրենց արժեհամակարգը:

Հետազոտության նպատակն է վերլուծել մարտական գործողությունների մասնակիցների մտա հետտրավմատիկ անձնային աճի (ՀՏՍ) և բազային արժեքային կողմնորոշումների փոխադարձ կապը՝ պարզելու, թե ինչպես է տրավմատիկ փորձառությունը ազդում անձի արժեքային համակարգի և անձնային զարգացման վրա:

### Հետազոտության խնդիրները

1. Բացահայտել այն գործոնները (օրինակ՝ սոցիալական աջակցություն, ադապտիվ մեխանիզմներ), որոնք նպաստում են տրավմայի վերածմանը անձնային աճի:
2. Գնահատել ՀՏՍ-ի և բազային արժեքների միջև կապերի վիճակագրական նշանակությունը՝ օգտագործելով համահարաբերակցային վերլուծություն:

Հետազոտության նորույթը այն է, որ այն առաջին անգամ Հայաստանի Հանրապետության համատեքստում համակցված կերպով ուսումնասիրում է մարտական գործողությունների մասնակիցների հետտրավմատիկ անձնային աճի և Շվարցի բազային արժեքային կողմնորոշումների փոխկապակցվածությունը: Այն համեմատում է տրավմատիկ փորձառություն ունեցող և չունեցող խմբերի արժեքային համակարգերի տարբերությունները՝ առաջարկելով նոր պատկերացումներ տրավմայի դրական հետևանքների մասին մեր մշակութային և սոցիալական իրողություններում:

*Տեսական նշանակությունը:* Հետազոտությունը հաստատում և ընդլայնում է հետ-տրավմատիկ աճի տեսության (Tedeschi & Calhoun) և բազային արժեքների տեսության (Schwartz) մոդելների կիրառելիությունը պատերազմական փորձառություն ունեցող անձանց վրա՝ ցույց տալով, թե ինչպես են արժեքային կողմնորոշումները միջևորդում տրավմայի և աճի միջև կապը: Աշխատանքը նաև նոր տվյալներ է ավելացնում անձի հոգեբանության և տրավմայի հոգեբանության ոլորտներին:

*Գործնական նշանակությունը:* Հետազոտության արդյունքները կարող են օգտագործվել հոգեբանական աջակցության ծրագրեր մշակելու համար՝ ուղղված մարտական գործողությունների մասնակիցների վերականգնմանը և անձնային աճի խթանմանը:

### **Հողվածի բովանդակությունը**

Տարբեր ուսումնասիրություններ վկայում են, որ մարտական գործողություններին մասնակցած անձինք հաճախ վերաիմաստավորում են իրենց կյանքն ու արժեքները՝ ձեռք բերելով հոգևոր փոփոխություններ, կյանքի արժեքի բարձրացում և ինքնազարգացման նոր հնարավորություններ: Դա վկայում է այն մասին, որ նրանք կարող են ընդլայնել իրենց ներքին ռեսուրսներն ու ձեռք բերել անձնային աճի նոր մակարդակ: Մյուս կողմից՝ պատերազմներին չմասնակցած անձանց մոտ արժեքային համակարգը կարող է ավելի բևեռացված լինել: որոշ արժեքներ նպաստում են անձնային աճին, իսկ մյուսները մնում են հակասական, ինչը կարող է դժվարացնել նրանց առաջընթացը: Տրավմատիկ փորձառությունների հնարավոր դրական հետևանքները կախված են սոցիալական աջակցության առկայությունից և ադապտիվ մեխանիզմներից, որոնք կարող են տրավման վերածել աճի աղբյուրի: Այս հիմնախնդրի համար անհրաժեշտ է խորքային և պարբերական ուսումնասիրություն, քանի որ պատերազմական իրավիճակները կրում են շարունակական բնույթ և ուսումնասիրության արդյունքները կարող են տալ արժեքավոր տվյալներ՝ հասկանալու համար, թե ինչպես կարող են տարբեր իրավիճակներ և արտաքին ազդեցություններ խթանել կամ կանխել անձնային աճը:

Հետտրավմատիկ անձնային աճի (Posttraumatic Growth, PTG) տեսությունը նկարագրում է դրական հոգեբանական փոփոխությունները, որոնք կարող են առաջանալ անհատի կողմից ծանր տրավմատիկ փորձի հաղթահարումից հետո: Այն ընդգծում է, որ տրավման կարող է հանգեցնել ոչ միայն տառապանքի, այլև անձնային զարգացման, իմաստավորման և կյանքի նոր հեռանկարների բացման: Այս տեսությունը հակադրվում է տրավմայի բացառապես վնասակար հետևանքների մասին տեսակետներին:

Ռիչարդ Թեդեսկիի և Լոուրենս Քալհունի տեսության (Tedeschi & Calhoun) համաձայն՝ ՀՏԱ-ն առաջանում է, երբ անհատը պայքարում է տրավմայի հետևանքների հետ և վերականգնում է իր կյանքի իմաստը: Այդ մոդելն առանձնացնում է 5 հիմնական տիրույթներ.

1. Անձնային ուժի զգացում. «Ես ավելի ուժեղ եմ, քան կարծում էի»:
2. Նոր հնարավորություններ. կյանքում նոր ուղղությունների բացահայտում:
3. Հարաբերությունների խորացում. մտերիմ կապերի արժևորում:
4. Կյանքի գնահատում. կյանքի փիլրությունության և արժեքի գիտակցում:
5. Հոգևոր փոփոխություն. կրոնական կամ էքզիստենցիալ հարցերի նկատմամբ հետաքրքրության աճ [7]:

Մթիվեն Ջոզեֆի օրգանիզմային արժեքավորման տեսության (Organismic Valuing Theory) համաձայն՝ մարդիկ ունեն բնածին հակում՝ ձգտելու աճի և ինքնակայացման, նույնիսկ տրավմայի պայմաններում: Տրավման խախտում է անձի հիմնական համոզմունքները՝ ստիպելով վերագնահատել կյանքը: Անձնային աճը տեղի է ունենում, երբ անհատը կարողանում է ինտեգրել տրավմատիկ փորձը իր ինքնության մեջ [4]:

Ռ. Ջանոֆ-Բուվանի «Կործանված ենթադրությունների» տեսությունը (Shattered Assumptions Theory) պնդում է, որ տրավման վերափոխում է անձի հիմնական ենթադրությունները աշխարհի մասին («Մշխարհը արդար է», «Ես անվտանգ եմ»): Անձնային աճի մեխանիզմն, ըստ նրա, կայանում է հետևյալում՝ տրավմայից հետո անհատը կառուցում է ավելի իրատեսական և ճկուն համոզմունքներ և այդ գործընթացը կարող է հանգեցնել կյանքի ավելի խոր ըմբռնման [3]:

ՀՏԱ-ն (PTG) տարբերվում է ռեզիլիենտությունից, քանի որ այն նկարագրում է աճ դեպի նոր մակարդակ, այլ ոչ թե պարզապես նախկին վիճակի վերականգնում: ՀՏԱ-ի չափման համար օգտագործվում է Հետտրավմատիկ անձնային աճի հարցարանը (Posttraumatic Growth Inventory- PTGI), որը բաղկացած է 21 հարցից (Tedeschi & Calhoun, 1996): Կիրառվող թերապիաներն են՝ իմաստի որոնումը խթանող նարատիվ թերապիա և էքզիստենցիալ մոտեցումներ, «Փորձագետ ուղեկից» մոդելը (Expert Companion Model), որտեղ թերապստը օգնում է այցելուին վերակառուցել պատմությունը [8]:

Հետտրավմատիկ աճի տեսությունը ընդգծում է մարդու հոգեբանության ճկունությունն ու հարմարվողականությունը: Այն հնարավորություն է տալիս տեսնել տրավման ոչ միայն որպես կործանարար ուժ, այլև որպես անձնային և հոգևոր վերափոխման հնարավորություն: Սակայն այն պետք է կիրառվի զգուշությամբ՝ հաշվի առնելով տրավմայի բարդությունն ու անհատի յուրահատկությունը:

Շվարցի բազային արժեքային կողմնորոշումների տեսությունը (Schwartz's Theory of Basic Human Values) հոգեբան Շալոմ Շվարցի (Shalom H. Schwartz) կողմից մշակված տեսություն է, որը բացահայտում է մարդկային արժեքների համընդհանուր կառուցվածքը և դրանց դերը մշակութային ու անհատական վարքագծում: Այս տեսությունը հիմնված է 10 հիմնական արժեքների վրա, որոնք կազմակերպված են շրջանաձև մոդելում (Circumplex Model)՝ նրանց միջև գոյություն ունեցող համատեղելիության և հակադրությունների հիման վրա:

Հիմնական արժեքները և կառուցվածքը

1. Ունիվերսալիզմ (Universalism)՝ բնության և մարդկության հանդեպ հոգատարություն:
2. Կամեղողություն (Benevolence)՝ մտերիմների բարօրության խնամք:
3. Ավանդականություն (Tradition)՝ մշակութային ժառանգության հարգանք:
4. Համաձայնեցում (Conformity)՝ սոցիալական նորմերի պահպանում:
5. Անվտանգություն (Security)՝ կայունության և կանխատեսելիության ձգտում:
6. Իշխանություն (Power)՝ սոցիալական կարգավիճակի և ռեսուրսների վերահսկողություն:
7. Զեղքերում (Achievement)՝ անձնական հաջողության ձգտում:
8. Հեդոնիզմ (Hedonism)՝ հաճույքի և բավարարվածության որոնում:
9. Ստիմուլյացիա (Stimulation)՝ նորությունների և ռիսկի ձգտում:
10. Անկախություն (Self-Direction)՝ անկախության և ստեղծագործականության ազատություն [5]:

Շրջանաձև մոդելի սկզբունքներն են.

- Համատեղելի արժեքներ. օրինակ՝ բարեգործություն և ունիվերսալիզմ:
- Հակադիր արժեքներ. օրինակ՝ իշխանություն և ունիվերսալիզմ, ավանդույթ և ինքնորոշում:

Հիմնական դրույթներն են.

1. Մշակութային համընդհանրություն. արժեքների կառուցվածքը համընդհանուր է բոլոր մշակույթներում, թեև առանձին արժեքների կարևորությունը տարբեր է:

2. Դինամիկ հարաբերություններ. արժեքները գործում են որպես դրդապատճառներ՝ հակադրվելով կամ լրացնելով միմյանց:
3. Արժեքների հիերարխիա. անհատները և մշակույթները դասակարգում են արժեքներն ըստ իրենց նախասիրությունների [6]

Տեսությունը կիրառվում է մշակութային հետազոտություններում. օրինակ՝ արևմտյան հասարակություններում գերակայում են ինքնորոշումը և հեղուկիզմը, իսկ ասիական հասարակություններում՝ անվտանգությունը և համաձայնեցումը, մարքեթինգում և սոցիալական քաղաքականության մեջ արժեքների վերլուծությունը օգտագործվում է սպառողական վարքագիծը և քաղաքական նախապատվությունները հասկանալու համար:

Հետազոտության իրականացման համար կիրառվել են հետևյալ մեթոդիկաները.

1. *Հետտրավմատիկ աճի հարցարան ZSUZ (PTGI - Tedeschi & Calhoun)* [2]:

Հարցարանը չափում է դրական փոփոխությունների մակարդակը, որոնք տեղի են ունեցել տրավմատիկ իրադարձությունից (այս դեպքում՝ մարտական գործողություններին մասնակցությունից) հետո և բաղկացած է հինգ ենթասանդղակներից, որոնք առընչվում են անձի աշխարհընկալման հիմքային շերտի հետ: Ըստ այս մեթոդիկայի՝ առանձնացվում են հետևյալ սանդղակները. մարդկանց հանդեպ վերաբերմունք (ԱՄԿ), Նոր հնարավորություններ (ԼՀ), Անհատական ուժ (ԱՌԻ), Հոգևոր փոփոխություններ (ՀՓ), Կյանքի արժեքի բարձրացում (ԿԱԲ):

2. *Բազային արժեքային կողմնորոշումներ (Շ. Շվարց)* [1, 86-92]: Շվարցի տեսությունը կարևոր գործիք է հասարակության և անհատի արժեքային համակարգերը հասկանալու համար: Այն ընդգծում է արժեքների դինամիկ բնույթը և դրանց դերը սոցիալական փոխազդեցություններում: Այս մեթոդիկան առանձնացնում է հետևյալ սանդղակները՝ կոնֆորմություն, ավանդականություն, կամեցողություն, ունիվերսալիզմ, ինքնուրույնություն, հեղուկիզմ, ձեռքբերումներ, իշխանություն, անվտանգություն, ստիմուլյացիա:

Հետազոտության արդյունքների հավաստիությունն ապահովվել է մաթեմատիկական վիճակագրության մեթոդների կիրառմամբ՝ նկարագրական վիճակագրություն, Սպիրմենի համահարաբերակցային վերլուծություն:

*Հետազոտության ընտրանքը.* մարտական գործողությունների մասնակիցներ՝ փորձարարական խումբ - R1 (n=200), մարտական գործողություններին չմասնակցածներ - R2՝ ստուգիչ խումբ (n=200):

Փորձարարական և ստուգիչ խմբերում Հետտրավմատիկ աճի հարցարանի և Բազային արժեքների կողմնորոշումների ախտորոշման մեթոդիկայի կիրառության արդյունքում ստացված տվյալները ենթարկել ենք համահարաբերակցային վերլուծության՝ պարզելու համար հետտրավմատիկ անձնային աճի և արժեքային կողմնորոշումների միջև փոխադարձ կապը, համեմատելով դրանց դրսևորումը մարտական գործողությունների մասնակցածների և չմասնակցածների մոտ:

Այդուհանդերձ տվյալները ցույց են տալիս փորձարարական (R1) և ստուգիչ խմբի (R2) անձնային արժեքների և հետտրավմատիկ անձնային աճի ցուցանիշների միջև առկա կապերը:

Աղյուսակ 1.

ՀՏԱ-ի սանդղանների և ինտեգրալ ցուցանիշների ու բազային արժեքային կորմոնորոշումների տվյալների համահարաբերակցային վերլուծությունը

№	Արժեքներ	ԱՈՒհ		ԱՍՎ		ՆՀ		ՀՓ		ԿԱԲ		Ինտեգր	
		R1	R2	R1	R2	R1	R2	R1	R2	R1	R2	R1	R2
1.	Կոնֆորմություն	0,12	-0,02	0,11	0,05	-0,08	0,22**	0,17*	0,23**	-0,11	0,28***	0,08	0,28***
2.	Ավանդականություն	-0,02	-0,17*	0,01	0,23**	0,13	0,21**	0,23**	0,53***	-0,06	-0,04	0,09	0,32***
3.	Կամեցողություն	-0,07	-0,09	-0,08	0,03	-0,1	0,32***	0,06	0,27***	-0,01	-0,18*	-0,12	0,11
4.	Ունիվերսալիզմ	-0,04	-0,19*	0,12	-0,2**	0,06	0,13	0,16*	0,36***	-0,14*	0,1	0,1	-0,05
5.	Ինքնուրույնություն	-0,06	-0,57***	-0,03	0,05	-0,25***	-0,18*	0,07	0,29***	-0,02	0,06	-0,16*	-0,24***
6.	Հերոնիզմ	0,08	-0,33***	-0,07	0,03	0,01	-0,45***	0,08	0,67***	-0,08	-0,19**	-0,02	-0,2**
7.	Ձեռքբերումներ	0,3***	-0,35***	0,2**	-0,22***	0,1	-0,08	-0,01	0,57***	-0,31***	-0,26***	0,22**	-0,32***
8.	Իշխանություն	0,03	0,11	0,14*	0,12	-0,01	0,05	0,46***	0,17*	0,02	-0,22**	0,19**	0,1
9.	Անվտանգություն	-0,17*	-0,1	0,19**	-0,23**	-0,14*	0,25***	0,2**	0,2**	-0,04	-0,14*	0,02	-0,1
10.	Մտխմուլացիա	-0,01	-0,15*	-0,16*	-0,37***	-0,12	0,3***	-0,17*	0,23**	-0,16*	-0,2**	-0,25***	-0,23**

*Օւնտոթոգրոյթյուն. \* —  $p \leq 0,05$ ; \*\* —  $p \leq 0,01$ ; \*\*\* —  $p \leq 0,001$ :*

Աղյուսակ 1-ում համահարաբերակցային վերլուծութեան արդյունքները ցույց են տալիս տարբեր արժեքային կողմնորոշումների և ՀՏԱ (հետտրավմատիկ աճի) սանդղակների միջև առկա կապերը՝ համեմատելով մարտական գործողութունների մասնակիցների (R1) և չմասնակցածների (R2) խմբերը:

R2 խմբում (չմասնակցածներ) կոնֆորմութիւնը ավելի ուժեղ կապ ունի *հոգևոր փոփոխութիւնների* (0.23\*\*) և *կյանքի արժեքի բարձրացման* (0.28\*\*\*) հետ, ինչը ենթադրում է, որ հասարակական նորմերին հարմարվող անհատները կարող են ավելի շատ արժուրէր կյանքի արժեքը և հոգևոր զարգացման հնարավորութիւնները:

R1 խմբում առկա է դրական նշանակալի կապ *նոր հնարավորութիւնների* միջև ( $r = 0,23^{**}$ ), ինչը վկայում է այն մասին, որ մարտական գործողութուններին մասնակցած անձինք ավելի հակված են ավանդականութեան և միևնույն ժամանակ բաց են նոր հնարավորութիւնների նկատմամբ: Իսկ R2 խմբում կապը նոր հնարավորութիւնների հետ շատ ավելի ուժեղ է ( $r = 0,53^{***}$ ), ինչը ենթադրում է, որ չմասնակցած անձինք ավանդականութիւնը շատ ավելի ինտեգրալ են համարում նոր հնարավորութիւնների որոնման գործընթացում:

R2 խմբում Ավանդականութեան և Կյանքի արժեքի բարձրացման (ԿԱԲ) միջև կապը բավականին ուժեղ է ( $r = 0,32^{***}$ ), ինչը ցույց է տալիս, որ խաղաղ պայմաններում գտնվող անձանց համար կյանքի արժեքի գիտակցումը շատ ավելի կապված է ավանդականութեան հետ:

Մարտական գործողութիւններին չմասնակցածների (R2) խմբում կամեցողութիւնը ուժեղ դրական կապ ունի ԱՄՎ-ի հետ (0.32\*\*), ինչը վկայում է այն մասին, որ խաղաղ պայմաններում կամեցողութիւնը նպաստում է դրական միջանձնային հարաբերութիւններին, աջակցութեանը և փոխօգնութեանը:

Մարտական գործողութիւններին մասնակցածների մտա կամեցողութիւնը ցույց է տալիս, որ կապ չունի ՆՀ-ի հետ (0.06), ինչը ենթադրում է, որ պատերազմ ինքնին չի խթանում կամեցողութեան միջոցով նոր հնարավորութիւնների որոնումը: Չմասնակցածների մտա այս կապը շատ ավելի ուժեղ է (0.27\*\*), ինչը նշանակում է, որ նրանց համար բարեփոխութիւնը կարող է գործել որպէս նոր հնարավորութիւնների զարգացման խթան՝ սոցիալական կապերի և գործընկերային հարաբերութիւնների տեսանկյունից: Մարտական գործողութիւնների մասնակիցների շրջանում կամեցողութիւնն ունի դրական, բայց թույլ կապ ՀՓ-ի հետ (0.27\*\*), ինչը կարող է վկայել այն մասին, որ պատերազմական իրավիճակը կարող է նպաստել բարեսրտութեան միջոցով հոգևոր վերափոխութիւններին:

Ունիվերսալիզմի և հոգևոր փոփոխութիւնների (ՀՓ) (0.36\*\*\*) միջև ուժեղ կապը (համեմատած R1 խմբի 0.16\* կապի հետ) վկայում է, որ մարտական գործողութիւններին չմասնակցած անձինք ունիվերսալիզմը ավելի շատ կապում են ներքին հոգևոր վերափոխման հետ, ինչը կարող է պայմանավորված լինել սոցիալական կայուն միջավայրում ձևավորված գաղափարական ընկալումներով:

R1 խմբում *ինքնուրույնութիւնը* բացասական կապ ունի նոր հնարավորութիւնների (-0,25\*\*\*) և ինտեգրալ ցուցանիշի (-0,16\*) հետ: R2 խմբում այն շատ ուժեղ բացասական կապ ունի կյանքի արժեքի բարձրացման (-0,24\*\*\*) հետ: Մարտական գործողութիւններին մասնակցած անձանց մտա ինքնուրույնութեան նվազումը կարող է կապված լինել թիմային մտածողութեան ամրապնդման հետ, մինչդէռ մյուս խմբի մտա այն արտացոլում է կյանքի իմաստի որոնման դժվարութիւնները: R1 խմբում ինքնուրույնութեան բացասական կապը նոր հնարավորութիւնների և ինտեգրալ ցուցանիշի հետ վկայում է այն մասին, որ պատերազմական փորձ ունեցող անձինք ավելի հակված են գործելու թիմային համախմբվածութեան շրջանակում՝ առաջնահերթութիւն տալով կոլեկտիվ որոշումներին:

R1 խմբում որևէ նշանակալի կապ չունի: R2 խմբում *հեղինակը* բացասականորեն է

կապվում կյանքի արժեքի բարձրացման ( $-0,2^{**}$ ) և հոգևոր փոփոխությունների ( $-0,45^{***}$ ) հետ, սակայն դրականորեն՝ նոր հնարավորությունների հետ ( $0,67^{***}$ ): R1 խմբում հեղինակի մի քանի կապերի բացակայությունը կարող է պայմանավորված լինել այն հանգամանքով, որ պատերազմական փորձ ունեցող անձինք առաջնահերթություն են տալիս գոյատևմանն ու սոցիալական համերաշխությանը, ինչը նվազեցնում է անձնական հաճույքի և վայելքի դերը:

Հետազոտության տվյալների համաձայն՝ *ձեռքբերումների* արժեքային կողմնորոշման և ՀՏԱ-ի ցուցանիշների միջև համահարաբերակցային կապերն էականորեն տարբերվում են մարտական գործողությունների մասնակիցների (R1) և չմասնակցած անձանց (R2) մոտ:

Մարտական գործողությունների մասնակիցների (R1) մոտ ձեռքբերումները դրական կապ ունեն անհատական ուժի ( $r = 0,3^{***}$ ) և այլ մարդկանց հանդեպ վերաբերմունքի ( $r = 0,2^{**}$ ) հետ: Մարտական գործողությունների մասնակիցների (R1) մոտ ձեռքբերումների և անհատական ուժի միջև ուժեղ դրական կապը ( $r = 0,3^{***}$ ) ցույց է տալիս, որ այս խմբում անձնական հաջողություններն ու նպատակների իրագործումը սերտորեն կապված են սեփական կարողությունների և ինքնավստահության ընկալման հետ, ինչը կարող է լինել մարտական փորձառության հետևանք, որտեղ անհատական գոյատևումն ու կայունությունը դառնում են առաջնային: Ձեռքբերումները բացասական կապ ունեն կյանքի արժեքի բարձրացման ( $r = -0,31^{***}$ ) հետ, ցույց է տալիս, որ անձնական հաջողություններին և նպատակներին ձգտելը կարող է հակադրվել կյանքի իմաստի և արժեքի ընկալմանը, հնարավոր է՝ մարտական փորձառության հետևանքով առաջացած արժեքային վերակողմնորոշման պատճառով:

Մարտական գործողությունների չմասնակցած զինծառայողների (R2) մոտ ձեռքբերումները բացասական կապ ունեն անհատական ուժի ( $r = -0,35^{***}$ ) և նոր հնարավորությունների ( $r = -0,22^{***}$ ) հետ: Մարտական փորձ չունեցող զինծառայողների շրջանում ձեռքբերումների վրա կենտրոնանալը հաճախ ուղեկցվում է ինքնավստահության անկմամբ և սահմանափակ հնարավորությունների ընկալմամբ: Հոգևոր փոփոխությունների հետ ձեռքբերումները ուժեղ դրական կապ ունեն ( $r = 0,57^{***}$ ), ինչը նշանակում է, որ այս խմբի մոտ ձեռքբերումների ձգտումը հաճախ ուղեկցվում է ինքնաճանաչման և հոգևոր վերափոխման գործընթացներով: Կյանքի արժեքի բարձրացման հետ ձեռքբերումները բացասական կապ ունեն ( $r = -0,26^{***}$ ), ինչը նշանակում է, որ քաղաքացիական անձանց մոտ ձեռքբերումների ձգտումը երբեմն կարող է նվազեցնել կյանքի արժեքի արժեքի սուբյեկտիվ ընկալումը: Դա կարող է պայմանավորված լինել նրանով, որ մրցակցային միջավայրը խթանում է սթրեսն ու անհանգստությունը, ինչը դժվարացնում է կյանքից լիարժեք բավարարվածության զգացողությունը:

Կոմբատանտների (R1) մոտ նկատվել է ուժեղ դրական կապ Հոգևոր փոփոխությունների (ՀՓ) ( $0,46^{***}$ ) և թույլ դրական կապ ՀՏԱ-ի ինտեգրալ ցուցանիշի հետ ( $0,19^{*}$ ): Մարտական գործողությունների մասնակիցների շրջանում «իշխանություն» արժեքը դրսևորվում է զգալիորեն ուժեղ կապով հոգևոր փոփոխությունների ( $0,46^{***}$ ) հետ: Այսինքն, տվյալ խումբը իշխանությունը դիտարկում է որպես իրենց անձնական աճի, հոգևոր վերափոխման կամ կարգապահության միջոցով ինքնահաստատման միջոց:

R2 խմբում (չմասնակցածների) «Անվտանգություն» արժեքը դրականորեն է կապված «Նոր հնարավորությունների» ( $\text{ՆՀ}$ ) ( $0,25^{***}$ ) և «Հոգևոր փոփոխությունների» (ՀՓ) ( $0,2^{**}$ ) հետ, ինչը կարող է մատնանշել, որ անվտանգության զգացումը խթանում է նոր փորձառությունների և հոգևոր աճի ձգտումը: Բացասական կապը «Այլ մարդկանց հանդեպ վերաբերմունքի» (ԱՄՎ) ( $-0,23$ ) և «Կյանքի արժեքի բարձրացման» (ԿԱԲ) ( $R = -0,14$ ) հետ կարող է ցույց տալ, որ անվտանգության կարիքը նվազեցնում է սոցիալական ներգրավվածությունը և կյանքի արժեքի գնահատումը:

R1 խմբում ստիմուլյացիան ունի թույլ բացասական կապ ԱՄՎ-ի հետ ( $-0,16^{*}$ ), իսկ R2 խմբում՝ ավելի ուժեղ բացասական կապ ( $-0,37^{***}$ ), ինչը կարող է ցույց տալ, որ հատկապես մարտական գործողություններին չմասնակցած անձանց մոտ ստիմուլյացիայի բարձր մակարդակը կապված է այլ մարդկանց հանդեպ ավելի բացասական վերաբերմունքի հետ:

R1 խմբում ստիմուլյացիան ՆՀ-ի հետ չունի նշանակալի կապ (-0.12), մինչդեռ R2 խմբում առկա է դրական նշանակալի կապ (0.30\*\*\*), ինչը կարող է մատնանշել, որ մարտական գործողություններին չմասնակցած անձանց մոտ ստիմուլյացիայի ձգտումը կապված է նոր հնարավորությունների որոնման հետ:

### **Եզրակացություն**

Վերլուծության ենթարկելով ուսումնասիրության արդյունքում ստացված տվյալները՝ կարող ենք կատարել հետևյալ եզրակացությունը. մարտական գործողություններին մասնակցած անձինք (R1) ավելի ուժեղ կապեր ունեն հոգևոր փոփոխությունների, կյանքի արժեքի բարձրացման և անհատական ուժի հետ, ինչը վկայում է նրանց անձնային աճի մասին: Չմասնակցած անձանց մոտ (R2) արժեքային համակարգը ավելի բևեռացված է. որոշ արժեքներ նպաստում են զարգացմանը, սակայն որոշները՝ հակասում միմյանց: Տրավմատիկ փորձառությունը կարող է վերածվել աճի, եթե մարդն ունի սոցիալական աջակցություն և ադապտիվ մեխանիզմներ: Ամփոփելով կատարված ուսումնասիրությունը՝ կարող ենք ասել, որ պատերազմի բացասական փորձը կարող է հանգեցնել դրական փոփոխությունների՝ կյանքի արժեքի գնահատման տեսանկյունից (հետտրավմատիկ աճի տեսությամբ համահունչ)՝ հենվելով բազային արժեքային կողմնորոշումների վրա:

**DOI:** <https://doi.org/10.58726/27382915-2025.2hs-262>

### **Գրականություն**

1. Մերոբյան Ա. Կ., Գրիգորյան Ա. Գ., Խաչատրյան Ն. Գ., Անձի դիսպոզիցիոնալ գծեր և սոցիալ-մշակութային կողմնորոշումներ. հոգեչափողական գործիքների տեղայնացում: Գիտամեթոդական ձեռնարկ, Երևան, ԵՊՀ հրատ., 2021, 128 էջ:
2. Магомед-Эминов М. Ш. Феномен посттравматического роста // Вестник Тамбовского университета. Гуманитарные науки. 2009. Вып. 3 (71), с. 111-117.;
3. Janoff-Bulman R. Shattered Assumptions: Towards a New Psychology of Trauma. Free Press. 1992.
4. Joseph S. What Doesn't Kill Us: The New Psychology of Posttraumatic Growth. Basic Books, 2011.
5. Schwartz S. H. Universals in the Content and Structure of Values: Theoretical Advances and Empirical Tests in 20 Countries. Advances in Experimental Social Psychology, 1992, p. 1-65.
6. Schwartz S. H. An Overview of the Schwartz Theory of Basic Values. Online Readings in Psychology and Culture, 2(1), 2012, p. 550-562.
7. Tedeschi R. G., & Calhoun L. G. The Posttraumatic Growth Inventory: Measuring the positive legacy of trauma. Journal of Traumatic Stress, 9(3), 1996, p. 455-471.
8. Tedeschi R. G. et al. Posttraumatic Growth: Theory, Research, and Applications. Routledge, 2018.

### **Взаимосвязь посттравматического личностного роста и базовых ценностных ориентаций участников боевых действий**

*Степанян Лилит*

**Ключевые слова:** *новые возможности, сила личности, переоценка ценности жизни, традиционность, самостоятельность, достижения, доброжелательность, безопасность*

В последние годы Армения столкнулась с военными ситуациями, такими как война в Арцах в 2020 году и последующие периодические боевые действия, что повысило значи-

мость изучения посттравматических расстройств и способов их преодоления. В современной психологии вырос интерес к положительным последствиям травмы (посттравматический рост), и данная работа восполняет пробел в этой сфере знаний, связанных с нашим региональным контекстом. Кроме того, она отвечает потребностям общества, помогая ветеранам и их семьям реинтегрироваться в жизнь. В статье рассматриваются вопросы, касающиеся взаимосвязи между посттравматическим личностным ростом (ПТЛР) и базовыми ценностями. Обсуждаются факторы, способствующие преобразованию травмы в личностный рост. Полученные результаты показывают, что лица, участвовавшие в боевых действиях, имеют более тесные связи с духовными изменениями, повышением ценности жизни и силой личности, что свидетельствует об их личностном росте. У лиц, не участвовавших в боевых действиях, ценностная система более поляризована: некоторые ценности способствуют развитию, тогда как другие противоречат друг другу. Травматический опыт может преобразоваться в рост, если человек обладает социальной поддержкой и адаптивными механизмами. Подводя итоги данного исследования, можно сказать, что негативный опыт войны может привести к положительным изменениям в оценке ценности жизни (в соответствии с теорией посттравматического роста), опираясь на базовые ценностные ориентации. Результаты исследования могут быть использованы для разработки программ психологической поддержки, направленных на восстановление участников боевых действий и стимулирование их личностного роста.

### **The Relationship Between Post-Traumatic Personal Growth and Basic Value Orientations in Combat Participants**

*Stepanyan Lilit*

**Key words:** *new opportunities, personal strength, re-evaluation of life's value, tradition, independence, achievement, volition, security*

Armenia has faced wartime situations in recent years (e.g., the 2020 Artsakh War and subsequent periodic combat operations), increasing the importance of studying post-traumatic disorders and their coping mechanisms. In modern psychology, there is a growing interest in the positive outcomes of trauma, known as Post-Traumatic Growth (PTG), and this study fills a knowledge gap related to our regional context. Additionally, it addresses societal needs by aiding veterans and their families in reintegrating into civilian life. This article examines the connections between PTG and basic value orientations, exploring the factors that transform trauma into personal growth. The findings indicate that individuals who participated in combat exhibit stronger associations with spiritual changes, heightened appreciation of life's value, and personal strength, reflecting their personal growth. In contrast, non-participants display a more polarized value system: some values foster development, while others conflict with each other. Summarizing the study, it can be concluded that the negative experiences of war can result in positive transformations, particularly in the re-evaluation of life's value (consistent with PTG theory), relying on basic value orientations. The study's results can be applied to develop psychological support programs aimed at the rehabilitation of combat participants and the promotion of their personal growth.

Ներկայացվել է 24. 03. 2025 թ.  
Գրախոսվել է 14. 04. 2025 թ.  
Ընդունվել է տպագրության 26. 11. 2025 թ.